



ԵՐԿԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԻՍ
ՄՇԱԿՈՅԹԻ ԵՒ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
Խմբագիր՝ Ս. ՎՐԱՅԵՆՈ

Դ. ՏԱՐԻ, ԹԻՒ 1

1936

ՑՈՒՆԻԱՐ - ՓԵՏՐԻԱՐ

ՌՈՍՏՈՄ

ՀԱՅ-ՎՐԱՅԱԿԱՆ

ՓՈԽՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԵՐԸ

Հ. Յ. Դ. Կենտրոնական Դիւանում, Ռոստոմի նամակների եւ ձեռագիրների շարքում, պահել է եւ այս գրածքի բնագիրը։ Երեք մեծադիր չորս էջոց քերպեր՝ գրւած Ռոստոմի պարզ ու յատակ գրչով։ Տեղ-տեղ ջնջուած ու բարեփոխուած։ Ոչ վերնագիր ունի, ոչ տարեթիւ եւ ոչ ստորագրութիւն։ Ե՞րբ է գրւած, ի՞նչ նակատագիր է ունեցել գրւածքը, — յայտնի չէ։ Սակայն ընդհանուր տպագորութիւնը այն է, որ գրութիւնը յատկացնած է «Դրօշակ»-ին՝ հրատարակելու Կովկասից գրւած նամակի ձեռով։ Արդեօֆ իրօֆ Կովկասից է գրել Ռոստոմը, թէ հենց Ժընեվում, — այդ էլ կարելի չէ ասել։

Գրութեան բովանդակութիւնից երեւում է, որ «նամակ»-ը գրւած է այն օրերին, երբ հայ-վրացական բանակուր առանձնապես սուր հանգամանիք էր ստացել շնորհիւ Գոլիցինեան ազգամիջեան կրթերը հրահրող ժաղաքականութեան։ Ռուսաստանի առաջին յեղափոխութեան նախորդող տարիներն էին դրանք, երբ Թիֆլիսի ուսու եւ վրացի մամուլի մէջ շահատակութիւններ էին անում Վելիչկօների եւ Ակալի Ծերեթելիների տիպի հայակեր ասպետներ։

Ռոստոմը հայ-վրացական փոխյարաքերութիւնների հարցը դրնում է սկզբունքային հռդի վրա, քննում պատմական, ըմկերային —

ՀՀ

բաղաքական մեկնակէտից ելնելով եւ իրեն յասուկ յատակամութեամբ ներկայացնում է Հ. Յ. Դաշնակցութեան տեսակէտը: Բընորշ է մասնաւորապէս նիւրի հարցադրութեան եւ զարգացման եղանակը-մէքորը, որ իր մէջ խտացնում է Ռոստումի իւրայատուկ «մարքսիզմը»: Ռոստումը խորքով, անշուշտ ազդւած էր մարքսիստական աշխարհահայեցքից, բայց գտարիւն մարքսիստ նրան, ի հարկէ, համարել չի կարելի, ինչպէս գտարիւն նարողնիկ չէր եւ Քըրիստուփորը. եւս առաւել անենքեթութիւն է «անիշխանական» կամ, մասնաւանդ, «նեչայեւեց» ցոյց տալ Ս. Զաւարեանին: Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիր երրորդութիւնը, անտարակոյս, աւելի կամ պակաս չափով ազդւել են եւրոպական եւ ռուսական այս կամ այն բաղաքական դպրոցի ուսմունքից, բայց նրանց գլխաւոր առաւելութիւնը հէնց նրանումն է, որ, ոչ յօրինակ հիշակեան հիմնադիրների, մեկնել են հայ իրականութեան առանձնայատուկ պայմաններից, կարողացել են մշակել ու ձեւակերպել որոշ չափով ինքնուրոյն աշխարհահայեցք եւ ընկերային-բաղաքական սեփական գաղափարախոսութիւն:

Հայ- վրացական փոխյարաբերութիւնների խնդիրը, այնպէս ինչպէս ներկայացնում է Ռոստումը, ըստ կութեան այսօր էլ մնում է իր ուժի մէջ, սակայն, կարելի չէ չընդունել, որ Ռոստումը խնդիրը չի առել բովանդակ ծաւալով: Դասակարգային բացատրութիւնը, անշուշտ, նիշուն է, բայց ամբողջ ճշմարտութիւնը չէ: Խնդրի մէջ կամ եւ ներքին-պատմական պատմաներ, երկու ժողովուրդների բաղաքական ճակատագրի բաժանման եւ բաղաքական հակումի նկատումներ, եւ, ի հարկէ, նաև ոռու կառավարութեան բաղաքական դաւերը եւ այլն: Այսօր, նոր դէպքերի ու փաստերի լոյսի տակ, Ռոստումի հիմնական միտքը կարելի է շատ աւելի լայնացնել ու խորացնել:

Այդուհանդերձ, Ռոստումի գրութիւնը մեծապէս շահեկան է, ոչ միայն յոկ իբրեւ պատմական վաւերագիր, այլ եւ որպէս գործնական արժէք ներկայացնող գրւածք:

ԽՄԲ.



Այս նամակը վաղուց է գրւած, ոռու մամուլի եւ վրաց հասարակութեան որոշ մասի «աղդամասիրական» արշաւանքը համարեա թէ դադարել է, ոռու կառավարութիւնը արդէն «խեղդում է տաճկահայերի եւ ոռուահայերի մէջ ծագած առաջադիմական չարժումը» (մենք մեր կողմից այդ, ի հարկէ, չենք վերադրում ոռու եւ մանաւանդ վրաց աղդամասիրների արշաւանքին): Բայց մենք դիտենք, որ ի-

509-200

րենց ազգի շահերի համար անձը չինայող այդ հաստատակամ գաղափարական գործիչները մի քիչ շունչ առնելով նորից կը բարձրացնեն իրենց ազգասիրական կոկոցը եւ նորանոր, աւելի անմիտ առասպելներ հնարելով՝ կը պղտորեն նորից միամիտների մաքերը, աշխատելով ցոյց տալ, թէ իրենք են ազգի միակ արթուն հովիւները եւ թէ առանց իրենց ազգի շահերը բոլորովին ոտնատակ կը լինին :

Ուստի թթու ազգասէրների արշաւանքին մենք վաղուց ենք ընտելացել, ինչպէս եւ Ռուսաստանում ապրող միւս ազգութիւնները. դրանց ընտելացել է եւ ըստ արժանւոյն դնահատել եւ ուստի հասարակութիւնը, որի լաւագոյն մասը ատելով՝ ատում է այդ ուղղութիւնը։ Սակայն, մեզ համար անսպասելի էր եւ միանգամայն ցաւալի մեր հարեւան վրաց հասարակութեան անմիտ յարձակումը եւ այն էլ մի այնպիսի ժամանակ, երբ մենք աչք չէինք կարողանում բաց անել մեր զիսին թափուող հարւածներից, երբ մենք «աւելի քան երբ եւ իցէ կարօտ էինք պաշտպանութեան»։ Վրաց ինտելիգենցիան մոռացաւ իւր «ասպետական բնաւորութիւնը», մոռացաւ իւր ազգի իրական շահերը եւ տարաւ իւր արշաւանքը ամէն կողմից՝ թէ բերանացի, թէ իւր մամուլի միջոցով եւ թէ ուստի խաւարամիտ մամուլին նիւթ մատակարարելով։ Վրաց հասարակութեան մէջ եղան եղակի, թոյլ, հակառակ ձայներ, բայց չգտնւեց մէկը, որ ասպարէզ դուրս դար եւ խիստ կերպով բողոքէր այդ անտեղի արշաւանքին դէմ։ Վրաց հասարակութեան լաւագոյն մասը ինքն էլ կամաչի (եթէ միայն չի ամաչէլ) այդ անմիտ, անտակտ, փոխադարձ աղդային ատելութիւն գրգռող քայլից։

Այս ի՞նչ արշաւանք է, ի՞նչ են պահանջում հայերից ուստի վրաց ազգերի անունից ճառող ինքնակոչ փաստաբանները, ի՞նչ թշնամութիւն կարող է լինել այդ ազգերի մէջ։ «Հայերը վաշխառուներ են, նրանք անիմիդ կերպով հարստահարում են հարեւան ազգերին, իրենց ձեռքն են ձգել առեւտուրը, յափշտակել են ամէն ինչ, մինչեւ իսկ . . . ուղղափառների սրբավայրերը (ա'խ, չարադրանե՛ր)։

Նախ եւ առաջ, ճի՞շտ է արդեօք այս բոլորը։ Ճի՞շտ է, որ հայերը կովկասում յափշտակել են ամէն ինչ։ Նրա՞նք են միայն երկրի միակ հարստահարիչները։ Նոյն ուստաները, վրացիները, մանաւանդ իմերելները վաշխառուներ չե՞ն արտադրում։ Յոյց տա՞նք արդեօք այն դաւաները, որտեղ թուրք վաշխառուներին ոչ ոք չի կարողանում դիմադրել։ Նորէլները, Բուշիլդները, Շիրայէլիները, Մորոզովները, Ալեքսէյէլները, Կորգինկինները, որոնք ահազին կապի-

տալներով մուտք են դործել Կովկաս, հայե՞ր են միթէ: Բորժոմի լայնատրած կալւածները փոխարքան չի՞ «յափշտակել»: Այդ փոխարքան չէ՞ր, որ ուժով իր հողի վրա բնակւող վրացի խիզաններին դրկեց իրենց դարաւոր իրաւունքներից: Կախեթի ամենալաւ մասը՝ Մուղուրկանը, Ցինանգալը Ռուսաց Կայսերական տունը չի՞ «յափշտակել»: Հայհոյեցէ՞ք «յափշտակողներին»: ձեր հայհոյանքի ամենամեծ մասը թափում է ձեր պաշտած կայսերական տան վրա: Այս բոլորը շատ լաւ է յայտնի յարձակում գործողներից շատերին, բայց դրանք դիտմամբ հարցին այս ձեւը տալով՝ աշխատում են մոլորեցնել հասարակական կարծիքը և դա իրենց բուն նպատակին ծառայեցնել:

Ռուսաստանում վերջին ժամանակներս արդէն կազմակերպւել է խոշոր արդիւնաբերողների, խոշոր վաճառականների, կամ այսպէս անուանեալ բուրժուական դասակարգը: Բայց Ռուսաստանն ընդարձակ երկիր է, բաղկացած բազմաթիւ մասերից, որոնք գտնվում են կուլտուրական շատ տարրեր աստիճանների վրա: Լեհաստանում մենք տեսնում ենք կապիտալիզմի ահագին զարդացում: բուն ուռական կենտրոնում՝ Մոսկվայում եւ իւր շրջակայքում արդիւնագործութիւնը նոր է մուտք գործել: որա հետ միաժամանակ այլ եւ այլ անկիւններում պատահում ենք վայրեր, ուր դեռ տիրապետում է ապրանքների անմիջական փոխանակութիւնը եւ ուր իրը դրամ գործ են ածում կենդանիների մորթին: Շնորհիւ Ռուսաստանի ընդհանուր տնտեսական սկզբունքի թոյլ զարգացման, նրա զանազան մասերի կազմակերպւող եւ կազմակերպւած բուրժուատների մէջ դեռ չէ կարող գորութիւն ունենալ շահերի ընդհանուր համերաշխութիւն, նրանց մէջ դեռ չի կարող ծագել ընդհանուր դասակարգային դիտակցութիւն: Խւրաքանչիւր մասի բուրժուատները անխուսափելի կերպով պէտք է ուրեմն եւ մրցեն միւս մասերի բուրժուատների հետ, պէտք է ուրեմն եւ թշնամանան: Այս թշնամութիւնը շնորհիւ մի քանի պատմական հանգամանքների Ռուսաստանում է քօղարկուել աղդային զաղախարով: Բուն ուռս նահանգների բուրժուատները չեն կարողանում մրցել Լեհաստանի բուրժուատների հետ, որովհետեւ վերջիններս աւելի ուժեղ են եւ ոչ թէ միայն թոյլ չեն տալիս իրենց բայոնում տարածել առաջինների ապրանքները, այլ եւ մեծ աջողութեամբ տարածում են իրենց ապրանքը դրանց բայոնում: Պարզ բան է, քանի որ այդ մրցումը գորութիւն ունի, թշնամութիւնը անխուսափելի կը

լինի, լեհական հարցը ասպարէզից չի իջնի, ոռւս մամուլի որոշ մաս-սի արշաւանքը լեհացիների վրա չի դադարի:

Ոռւս արդիւնագործողները ուզում են մացնել իրենց կազիտալ-ները Կովկասում, ոռւս վաճառականները իրենք են ուզում ապրանք արտահանել Կովկաս, սակայն դուքս երկրի մէջ պատահում են լուրջ մրցակիցներ, որոնք գվառարապէս հայերն են, որոնք նոյնպէս ձեռ-նամուխ են լինում խոշոր արդիւնագործական ձեռնարկութիւնների, նոյնպէս աջող կերպով մացնում են երկրի մէջ երոպական եւ ոռւ-սական ապրանքներ եւ աւելի լաւ ճանաչելով երկրի պայմանները՝ կամ թոյլ չեն տալս միւսներին հաստատելու, կամ մեծ խոչընդոտ են լինում հաստատածներին:

Կառավարութիւնը գրաւում է Անդրկասպեան երկիրը, գցում է երկաթուղու գիծը, ոռւս բուրժուան հրանում է, այդ նրա տենչալի ցանկութիւնն է՝ իւր ապրանքները մացնելու, այնտեղից ապրանքներ արտահանելու համար նոր հրապարակ է բացում: Սակայն, մի քա-նի ժամանկից յետոյ, ոռւս բուրժուան տեսնում է, որ ամբողջ Անդր-կասպեան երկիրը պատած է գալրձեալ . . . հայ վաճառականներով: Ի հարկէ, այս պայմանների մէջ չի կարելի ոպասել, որ զանազան Մո-րոզովները, Ալեքսէյէվները, Կորլինկինները բարեկամական աչքով նայեն հայերի վրա. պարզ բան է, որ գրգռւած ոռւս բուրժուանե-րը եւ իրենց բարեկամները, չուզենալով թշնամութեան բոն պատ-ճառը երեւան հանել, ամէն տեսակ յիմար զրապարտութիւններ կը թափեն «հայերի» վրա եւ կը ծափահարեն Սուլթանին հայերի գըլ-խին կատարած վայրագութիւնների առթիւ: Այս պարոնները կով-կասեան բոլոր ազգութիւնների մէջ միայն հայերին են մեղադրում ապստամբութեան մէջ կառավարութեան դէմ: Ծիծաղելի չէ^o այս Կովկասի մահմետականները միշտ պատրաստ են եղել ապստամբե-լու ոռւս կառավարութեան դէմ: Ամենքը յիշում են անշուշտ վերջին ոռւս-տաճկական պատերազմի ժամանակ մահմետականների պատ-ճառատութիւնները, եւ եթէ տաճկինները քիչ էլ առաջ խաղային, Ե-րեւանը գրաւէին, բոլոր մահմետականները ոտի կը կանգնէին: Լեռ-նական Ղաղի-Ղումուղցիք դրան էլ չսպասեցին եւ ապստամբեցին: Ոչ ոք էլ չի կարող ասել, որ վրացիների մէջ ճգտում չկայ ոռւսա-կան բռնակալ Ծից աղատելու: Բայց եւ այնպէս, կրկնում ենք, այդ պարոնների աչքում միայն հայերն են մեղաւոր: Ինչո՞ւ: - Որովհե-տեւ հայերն են դրանց առեւտրական ասպարէզում խոչընդոտ հան-դիսանում եւ ոչ վրացիք, կամ թուրքերը: Պարզ է, որ այստեղ ոչ քաղաքականութիւնն է դեր խաղում եւ ոչ համայն ոռւս ազգի շա-

ՀԵՐԸ, այլ ԱՌԱԿԱՋԻ ծանրամիտ Տիւտ Տիտիչների *) դրականի շահերը:

Հաստափոր եւ ծանրագլուխ ռուս բուրժուաները չեն կարողանում մրցել հրէաների հետ: Ահա հրէական հարցը սուր կերպարանք է առնում, հրէաները տասնեակ հաղարներով քշում են Ռուսաստանից, մնացածների իրաւունքները կրճատում: Այս բոլորը կատարում է ազգասիրաբար, յանուն ռուս ժողովրդի բարեկեցութեան եւ այլն: Ցոյց տալու համար, թէ ինքը սուր ժողովուրդը ինչպէ՞ս է վերաբերում այդ տեսակ ազգասիրութեան, առաջ բերենք մի փաստ: Հարաւային Ռուսաստանում, Բեսարաբիայում ահագին թուվ հրէա վաշխառուներ կային, ցրւած գիւղերում: Հրէական արշաւանքի ժամանակ այդպիսի խոչոր կալւածատէրերը, հանդիսանալով ջերմ պաշտպան գիւղացիների շահերի, սաստիկ աղմուկ էին բարձրացրել տեղական հրէաների դէմ, աղաղակելով, թէ դրանք ժողովրդի արիւնը ծծողներ են եւ այն, պէտք է դրանց բոլորին քշել, որպէսզի ժողովուրդը կարողանայ մի քիչ շունչ քաշել: Սարակեւելչի **) սերունդների նեարդները շատ էին նրբացել. նրանք ժողովրդի թշւառ զրութեան վրա բաւականաշափ աղի արտասուր թափեցին, նրա պասութեան համար «արդարութիւն», «արդարութիւն» կոչելով կառավարութեան դիմեցին: Բարեկանամ Հայր-Թաղաւորը լսեց դրանց արդար բողոքները. հրէաները հալածւեցան, բեսարաբիան զգավի կերպով աղատւեց իր կեղեցողներից, բայց յիմար ռուս ժողովուրդը սկսեց . . . լալ՝ ափսոսանքով յիշելով մօտիկ անցեալը: Պատճառը շատ պարզ էր: Այդ գիւղացիները չունին սեփական հող. բոլոր հողերը պատկանում են խոչոր, շատ խոչոր կալւածատէրերին: Քանի կային հրէա վաշխառուները, գիւղացիները փոխ էին առնում դրամ, կապալով վերցնում կալւածատէրերի հողը եւ վարում: Այդ իրենց աւելի ձեռնտու էր: Իսկ վաշխառուների հեռանալուց յետոյ, գիւղացիները ստիպւած եղան անպատճառ աշխատել նրանց արտերում, իբր հասրակ մշակ, որ ստանում է միայն իր օրավարձը, ստիպւած եղան իրենց հարկաւոր դրամի համար անպատճառ կալւածատէրերին գիմել եւ այդպիսով ընկնել բացառապէս դրանց ճանկը:

Եւ ինչպէ՞ս չալ . . .

Քանի որ, կրկնում ենք, Ռուսաստանում կապիտալիզմի զարգացումը թոյլ է, նրա զանազան անկիւններում դոյութիւն ունի տնտեսական անհաւասար զարգացում, քանի որ մէկ անկիւնի արդիւնա-

*) Տիւտ Տիտիչ - ռուս գրական տիպ՝ կոպիտ վաշխառու վանառական:

**) Գոգոլի հերոսներից մէկը՝ գոնեիի կալւածատէր:

դործողները, վաճառականները աշխատում են ներս մտնել այնտեղ, ուր տեղացիներն արդէն տարածել են իրենց ցանցերը, դրանց մէջ անխուսափելի է խմբական թշնամութիւնը, որ հետեւանք է պարզ տնտեսական մըցման: Եւ որտեղ որ հնարաւոր է, այդ տնտեսական թշնամութիւնը քօղարկում է այս կամ այն գաղափարով՝ ազգային, քրիստոնէական եւ այլն: Իսկ երբ Խուսաստանն եւս մտնի կապիտալիստական զօրեղ կազմակերպութեան մէջ, երբ երթեւեկութիւնը դիւրանայ, իրարից հեռու անկիւններն ընդունեն քիչ թէ շատ միաւեսակ տնտեսական զարգացում, այն ժամանակ այդ խմբական թշնամութիւնը կը վերանայ, այն ժամանակ մըցորդները կը լինեն ոչ թէ մի անկիւնի բուրժուաները միւս անկիւնի բուրժուաների հետ, այլ այս անհատը միւսի հետ, որ անկիւնին էլ դրանք պատկանեն: Եւ երբ վերանայ այդ տեսակ թշնամութիւնը, այն ժամանակ երկրի մէջ կը թուլանան եւ հետզհետէ կը կորչեն զանազան աղդային թշնամութիւնները: Ընդհակառակը, այն ժամանակ տեղի կունենայ մի նոր երեւոյթ: Մոսկովյայի բուրժուան իւր բարեկամական ձեռքը կը մեկնի իր վաղեմի թշնամի՝ կովկասի, Լեհաստանի բուրժուաներին: Նրանց մէջ կը զարդանայ դասակարգային ինքնամանաշողութիւնը: Նրանք իրար ձեռք ձեռքի կը տան միացեալ ուժերով կուելու բանւոր զասակարգի կազմակերպութեան դէմ, այն սարսափելի ուժի, որ անխուսափելի հետեւանք կը լինի կապիտալիստական զարգացման: Իսկ մինչեւ այդ ժամանակ հայ ազգը, լեհ ազգը եւ այլն կը կրեն անընդհատ յարձակումներ ոուս բուրժուազիայի կողմից, քաւելով իրենց բուրժուաների մեղքը:

Ահա ոուս մամուլի որոշ մասի արշաւանքի բուն դրդիչ պատճառները, մամուլի, որ արտայայտիչ է այս գէպքում ոուս բուրժուաների նպատակների: (Սրանով չենք ուզում առել, ի հարկէ, որ այդ օրդանները բուն բուրժուական են. Խուսաստանի տնտեսական կեանքը դեռ այն աստիճան չի զարգացած, որ բուրժուաները կարողանան որոշ ուղղութեամբ ասպարէզ գուրս գալ): Դրա այդ ուղղութիւնը գնահատւած է բոլորի կողմից, հասկացող դասի մէջ նա իւր յարձակումներով ու չնաշխարհիկ առասպելներով միայն ծիծաղ է կարողանում շարժել:

Այլ բան է մեր հարեւան վրացիների արշաւանքը, որը դեռ չէ քննադատւած, դեռ չէ գնահատւած նոյն իսկ վրաց հասկացող դասի կողմից եւ որը մի քիչ այլ բնաւորութիւն ունի:

Հայերը շատ վաղուց են ապրում Վրաստանում: Հէնց առաջւանից հայերի մեծամասնութիւնը երկրագործ էր, բայց եւ այնպէս երկրի առեւտուրը եւ արհեստները շուտով անցան դրանց ձեռքը: Այդ

ժամանակ վաճառականը, արհեստաւորը անհրաժեշտ տարր էին երկրի համար. նրանք անհրաժեշտ էին թէ կառավարութեան, թէ ազնւականութեան եւ թէ ժողովրդի համար: Նրանց դէմ թշնամութեան ոչ մէկ նշոյլ չէր նկատում: Խուսաց տիրապետութեան ժամանակ էլ հայերը կարողացան պահպանել իրենց դիրքը: Վրաց ազնւականներն այս ժամանակ իրենց շատ լաւ էին զգում. նրանք ազատւել էին իրենց պարաւականութիւնից՝ հայրենիքի պաշտպանութեան համար կուելուց, մի բան, որ արդարացնում էր նրանց գոյութիւնը, ու անձնատուր էին եղել խաղաղ, անհոգ կեանքի: Վրաց նախկին ազնւականները մըցում էին իրար հետ իրենց քաջութեամբ, հայրենիքի պաշտպանութեան համար արին թափելու պատրաստակամութեամբ, իսկ այդ ժամանակից սկսած ազնւականները մըցում էին . . . գինի խմելու ընդունակութեամբ: Այդ խաղաղ, անդորր, անհոգ կեանքը երկար չէր կարող տեւել. երկրի մէջ այդ ժամանակ տեղի էին ունենում նշանաւոր փոփոխութիւններ, որոնք սկսում էին աւելի եւ աւելի վրզովել վրաց ազնւականութեան թոշնային անդարդ կեանքը: Երկրի տնտեսական կեանքը սկսեց արագ զարգանալ, արհեստները ծաղկեցին, առեւտուրը մեծ ծաւալ ստացաւ, ճանապարհները լաւացան, լուսաւորած երկրների հետ չփումը սաստկացաւ, կեանքի մէջ առաջացան նորանոր կարիքներ, որոնց հարկաւոր էր բաւականութիւն տալ: Այդ կարիքները աւելի ծագում էին ազնւականութեան մէջ, իրը երկրի առաջադէմ տարրի: Նոր կարիքներին բաւականութիւն տալու համար հարկաւոր էր դրամ: Այդ դրամը ազնւականութիւնը չունէր, չէր կարող ստանալ իւր ճորտ գիւղացիներից: Վերջիններս միմիայն բնական նիւթ կարող էին տալ: Ահա այստեղ դրամատէրերը՝ հայ վաճառականներն ու վաշխառուները, կամ խօսելով ընդհանուր լեզով՝ հայերը սկսեցին մեծ զեր խաղալ՝ մի տեսակ միջնորդի գեր կատարելով ազնւականութեան եւ գիւղական տարրի միջեւ: Ազնւականին դրամ է հարկաւոր. նա ինքը անընդունակ է առեւտրական ձեռնարկութիւնների համար, նա չի կարող ծախել ինքը իւր գիւղացիներից ստացած բնական տուրքը՝ ցորենը, գարին, բուրդը, մրգերը եւ այլն: «Հայը» տալիս է ազնւականին հարկաւոր դրամը եւ վերցնում է դրա փոխանակ նրա ստացած արդիւնքը եւ ահազին օգուտով էլ իւր դրապանի համար ծախում այլ տեղեր, նորից դրամի փոխանակում: Գիւղացուն նոյնպէս դրամ է հարկաւոր: Հայը նրան էլ է տալիս եւ մէկին երկու-երեք առնում նրա հասոյթից: Այսպիսով «Հայը» կեղեքում է ազնւականին էլ, գիւղացուն էլ եւ երկուսն էլ նրանից դոհ են:

ԵՐԲ ճորտութիւնը վերացաւ, Վրաստանի տնտեսական կեանքը

աւելի աղատութիւն ստացաւ, հայը աւելի սաստիկ, աւելի մեծ դիւրութեամբ շարունակեց իւր կեղեքումը: Այդ ժամանակ էլ չէք լսում ոչ մի բողոքի ձայն ոչ մի կողմից: այդ ժամանակ էլ վաշխառուն անհրաժեշտութիւն էր երկուսի համար էլ առանց այդ տարրի նը-րանք չէին կարող յարմարել կեանքի նոր պահանջներին: Ազնւականութեան կարիքները հետզետէ մեծանում էին, զիւղացիներից ստացւած տարեկան հասոյթը չէր կարող բաւականութիւն տալ աղ-նւականի արժանավայել կեանքին: Շուայլ ծախսերը ծածկելու հա-մար հարկաւոր էր գրաւ դնել հողերը, ճենամուխ լինել, «մայր գումարին», եւ վրաց աղնւականները միշտ գնում էին «չնչին, ան-ոչտք հողերը» նազդ փող համարելով: Այսպէս, շատ բնական ճա-սապարհով, մի կողմից քայլայում էր վրաց աղնւականութիւնը, իսկ միւս կողմից հարսաւութիւնը դիվում էր հայ եւ մասամբ էլ նոր ծնունդ առած վրաց գրամատէրերի մօտ: Այս ժամանակ ահա սկս-ւում են կամաց-կամաց լուել բողոքի ձայներ հայ «վաշխառուների», «հայութեան» դէմ: Եւ վրաց հասարակութեան այժմեան ազգասի-րական ճառերը, նրա կոյր արշաւանքը «Հայութեան» դէմ արտա-փայլումն է վրաց աղնւականութեան տնտեսական քայլայման: Դոքա-ուժասպառ եղած, թուլացած, իրենց անկումը զգացած աղնւական-ների անզօր ճիշերն են. դրանք դէպի վաճառականական, վաշխա-ռուական ասպարէզը ձգտող, բայց արդէն փորձւածների հետ մըր-ցելու անընդունակ աղնւականների կատաղած աղմուկներն են. դը-րանք, վերջապէս, ճուից նոր դուրս եկած եւ իրենց նոր ասպարէզի վրա արդէն քիչ թէ շատ աջողութիւն գտած վրացի դրամատէրերի ինքնարաւական մըթմքոցն է: Եւ վրաց ինտելիգենտները, որը գի-տակցարար, որը անդիտակցարար, որը կամայ, որը ակամայ, ի-րենց զցել են այդ հոսանքի մէջ, հետեւում են վերոյիշեալների շա-հադիտական միտումներին, մի կողմ թողնելով իրենց ժողովրդի իսկական շահերը:

Այդ արշաւանքի բուն աղբիւսը պարզ է մեկ համար. մենք չենք խարեւ դրանով եւ չենք վերագրի այդ ամբողջ վրաց աղդին, ինչպէս չենք ընդունի ոռւս մամուլի որոշ մասի արշաւանքը իբր արտայայ-տիչ համայն ոռւս ժողովրդի ձգտման: Մենք տեսնում ենք, որ հայ, վրացի, թուրք, ոռւս աշխատաւոր տարրի մէջ վիստում են ամէն աղ-դի, ամէն դիրքի պատկանող արիւն ծծող վամպիրներ, որոնցից ո-մանք ուժով, ոմանք քաղցրութեամբ, ոմանք խարելով, ոմանք քըծ-նելով եւ նրա թոյլ կողմերը շոյելով՝ առաջարկում են իրենց ծա-ռայութիւնը . . . նրան կեղեքելու: Իւրաքանչիւրը վրանցից աշ-խատում է հաւատացնել, որ եթէ ինքը կեղեքի, աւելի լաւ կը լինի::

Ճնշւած եւ տգէտ ժողովուրդը այդ կեղեքումը համարելով շատ
բնական երեւոյթ եւ ընտրութիւնն անխուսափելի, հակւոմ է սրա
կամ նրա կողմը, ի հարկէ, որքան դա կախւած է իր կամքից, որքան
թոյլ են տալիս իրեն իւր տնտեսական եւ քաղաքական պայմանները:
Բացի այդ, նա յաճախ ոչ թէ միայն չի ճանաչում իւր իսկական թըշ-
նամիներին, այլ խաբւելով այդ վամպիրների ճարագիտական նըպա-
տակներին: Իայց այսպէս չի մնայ. կը գայ ժամանակ, երկրի դրու-
թիւնը կը փոխէի, աշխատաւոր տարրը կը տեսնի, որ պարտաւոր չէ
անպատճառ ընտրութիւն անել կեղեքողների մէջ, որ կարելի է եւ
չի դիմել. նա կը ճանաչի իւր իսկական թըշնամիներին, կը ճանաչի
եւ բարեկամներին. նա միջոց կունենայ բարձրացնել իւր հսկայա-
կան ջղուտ բազուկը, ջարդել այդ վամպիրների գլուխը եւ լինել տէր
իւր աշխատանքին: Իսկ առօրեայ ծանր հոգերի մէջ խորասուլած
աշխատաւոր տարրին կուելու միջոց տալու պարտականութիւնը
ծանրանում է երիտասարդ ուժերի վրա, եւ իւրաքանչիւր երկրի ե-
րիտասարդութիւնը պարտաւոր է կրել այդ ծանր լուծը:

Մենք հաւատացած ենք, որ վրաց երիտասարդութեան այն մասն
էլ, որ հասկանում է իրերի դրութիւնը, կը հասկացնի վրաց հասա-
րակութեան այդ թըշնամութեան, այդ բողոքների իսկական արժէքը.
Հաւատացած ենք, որ վրացի երիտասարդ ուժերը, որոնք անկեղծ
կերպավ ձգում են իրենց ժողովրդի բարելաւութեան, բայց տար-
ւում են ընդհանուր հոսանքով, կը հասկան, որ վրացի, հայ, ոռու,
թուրք աշխատաւոր տարրերի մէջ չի կարող լինել շահերի անհամե-
րաշխութիւն, որ այդ անհամերաշխութիւնը կարող է լինել միայն
դրանց կեղեքող տարրերի մէջ. հաւատացած ենք, որ վրացի երիտա-
սարդութիւնը չի հետեւի «իվէրիա» *) լրագրի օրինակին՝ քծնելով
ուռւ մամուլի ստոր մասի առաջ աշխատել ձեռք բերել երկրի հա-
մար լաւ դրութիւն, այլ ձեռք ձեռքի տւած բոլոր միւս ազդութիւն-
ների դործողների հետ՝ կը կուին հայ, վրացի, թուրք, ոռու հա-
րստահարիչների դէմ, կը կուին փոխարքայի, կայսերական տան
ուսնձգութիւնների դէմ, կը կուին վերջապէս, երկրի գլխաւոր չա-
րեքի միապետական բռնակալութեան դէմ:

Յ. Գ. — Վրաց հասարակութեան մի մասի մէջ տարածւած է

*) Վրացական ազգայնամոլ-հայասեաց քերը:

այն միտքը, իբր թէ հայերը ձգտում են կովկասում ձեռք բերել աղ-գային անկախութիւն եւ Թիֆլիզը դարձնել մայրաքաղաք: (Ընթեր-ողները, անշուշտ, յիշում են «Եռվոյէ Վրէմիա»-յի^{*}) յօդւածը, որով ազատ Հայաստանի սահմանները հասնում էին մինչեւ Ռոս-դով): Դա զարմանալի չէ. վրաց հասարակութիւնը այժմ այնպէս է տուլ: Դա զարմանալի չէ. վրաց հասարակութիւնը այժմ այնպէս է տրամադրուած, որ դրանից էլ աւելի անհեթեթ կարծիքներ կարող են իբր սուսյդ լուրեր տարածւել, եւ մենք հասկանում ենք վրաց ազգասէրների արդար զայրոյթը . . . Թիֆլիզի դրաման առթիւ: Հասկանում ենք, բայց ներել չենք կարող այդ աստիճանի միամը-տութիւն: Կարող ենք հաւատացնել այդ կարգի բողոքողներին, որ հայ յեղափոխականների կողմէց չկայ ոչ մի լուրջ ձգտում ոչ Թիֆ-լիզը դրաւելու, ոչ էլ առհասարակ Ռուսահայաստանն անջատելու եւ նրա անկախութիւնը հռչակելու: Կարող ենք հաւատացնել, որ հայ յեղափոխականները ռուսահայերի դրութիւնը բարւոքելու համար չեն դիմի անջատման, այլ Ռուսաստանի բոլոր միւս յեղափոխական-ների հետ կը կուեն երկրի ընդհանուր չարիքների դէմ:

Ճիշտ է, հայ սոցիալ-դեմոկրատական Հնչակեան կուսակցութեան ծրագրի մէջ կայ մի կէտ, որի համաձայն այդ կուսակցութիւնը, Տաճկաստանի ազատութիւնից յետոյ, պէտք է զբաղւի Պարս-կահայաստանի եւ Ռուսահայաստանի ազատութեան գործով՝ աշխատելով կազմել այդ երեքից մի ընդհանուր հայկական կառավարութիւն (ուղում է ասել՝ պէտութիւն. ԽՄԲ.): Բայց ամենայն վստահութեամբ կարող ենք հաւատացնել վրաց հասարակութեան, որ Հնչակեան կուսակցութիւնը ոչ մի ժամանակ այլպիսի տղայամիտ ձգտում չի արտայայտի: Զէ՞ որ նրա ծրագրի համաձայն Ռուսահայաստանի ազատութիւնը ապագայի գործ է, դրանով նա կը զբաղւի Տաճկահայաստանի եւ դուցէ Պարսկահայաստանի ազատութիւնից յետոյ: Իսկ մինչեւ այդ ժամանակը Հնչակեան կուսակցութիւնը կը համոզի իւր ծրագրի կատարեալ սնամտութեան մէջ, մենք հաւատացած ենք դրանում: Կարելի՞ բան է, որ այդքան ժամանակւայ ընթացքում գիտական-սոցիալիստ Հնչակը չհասկանայ, վերջապէս, գիտական սոցիալիզմի ամենատարրական սկզբունքը:

Թո՞ղ վրացիք ի զուր տեղը չվրդովիւն. Հայերը Թիֆլիզը չեն «յափշտակի». մենք երաշխաւորում ենք Հնչակեան կուսակցութեան կողմից:

*.) Ռուս պահպանողական - հայակեր քերք: